

ՄԻ ԷՋ ԿԻՆԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՍԼՈՒԹՅԱՆ ՍՈՒԼՁԱՆՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
(XIII դ. 60-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Ա. Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության գրեթե ամբողջ պատմության ընթացքում նրա ամենավտանգավոր հակառակորդը եղել է Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը: 1250 թ. Եգիպտոսում մամլուքների իշխանության գալով նոր փուլ էր սկսվում ինչպես այդ երկրի, այնպես էլ ողջ Մերձավոր Արևելքի ժողովուրդների քաղաքական կյանքում<sup>1</sup>:

Հավատքի հարցում լինելով խիստ ուղղադավան՝ մամլուքները կրկին առաջ էին քաշում ջիհադի՝ մոնղոլների և քրիստոնյաների դեմ սրբազան պատերազմի գաղափարը: Մամլուքյան պետությունը և նրա բանակը շատ հզորացան, երբ սուլթան Կուտուբի դավադիր սպանությունից հետո գահին բազմեցին նախ Բեյբարսը<sup>2</sup> (1260-1277), ապա՝ Քալաունը (1279-1290): Նրանց օրոք վերակառուցվեցին ամրությունները, ստեղծվեց մեծ նավատորմ, կարգավորվեց փոստային կայքը:

Նման պայմաններում հայկական թագավորությունը պետք է կարողանար զգույշ և հեռատեսական արտաքին քաղաքականություն վարել իր հզոր հարևանների նկատմամբ:

Մամլուքները Արևելքի և Կովկասի տարբեր երկրների շուկաներում գնված

հիմնականում թյուրքազգի ստրուկներ էին, որոնք համալրում էին փոքր («մամլուք» բառը նշանակում է ծառա, ստրուկ): Նրանց կառավարումը Եգիպտոսում տեղեկ մոտ երկուսուկես հարյուրամյակ: Մամլուքները Այուբյաններից մեծ հարստություններ ժառանգեցին Սիրիայում և Եգիպտոսում<sup>3</sup>: Նրանց շրջանում գոյություն ունեցող բարդ աստիճանակարգություն, որը գլխավորում էին սուլթանի անձնական մամլուքները: Նրանք շարունակում էին Այուբյանների սունիական քաղաքականությունը և համարում էին, որ պետք է հենվեն պրոֆեսիոնալ բանակի վրա, քանի որ բանակն էր ամենակարևոր և վճռորոշ գործոնը պետության կայացման և ամրապնդման գործում:

Մամլուքների փոքր բաժանված էր երկու մասի: Առաջին մասը գտնվում էր սուլթանի անմիջական տրամադրության տակ, իսկ երկրորդ մասը ցրված էր քաղաքներում, գյուղերում, տափաստաններում և պաշտպանում էր երկրի սահմանները<sup>4</sup>: Մամլուքյան բանակը կազմված էր, բացի թուրքերից, նաև չերքեսներից, բերդերից, արաբներից, թուրքմեններից, բրոնի մահմեդականացված քրիստոնյաներից և այլն: Բանակում ամենագլխավոր դեմքերն էին էմիրները (ամիրաները), որոնք ղեկավարում էին հապարավոր փնվորների մարտական գործողությունները:

<sup>1</sup> Տես *Makrizi. Histoire des Sultans Mamelouks. Vol. I. Paris, 1837, PP. 20-30*; «The Cambridge history of Islam», Vol. IA. Cambridge, 1977, P. 210; *D. Ayalon. Studies on the Mamelukes of Egypt (1250-1517)*, part VI. PP. 3-5.  
<sup>2</sup> Տես *Bar Habraeus. The Chronography. London, 1932, PP. 438-439*; *B. Spuler. The Muslim World, part II. Leiden, 1960, P. 20*; «The Encyclopaedia of Islam», Vol. II. London, 1965, P. 1125.  
<sup>3</sup> Տես *К. Босворт. Мусульманские династии. М., 1971, с. 101*; *А. Семенова. Салах-ад-Дин и мамлюки в Египте. М., 1966, с. 183*; *М. Заборов. Крестовосцы на Востоке. М., 1980, с. 288*; *M. Setton. A history of the Crusades, 1189-1311, Vol. II. London, 1969, P. 736*.  
<sup>4</sup> Տես *Կ. Բոսփորտ, նշ. աշխ., էջ 101, Լ. Սեմյունովա, նշ. աշխ., էջ 195*:

րը: Սուլթանը ամեն տարի էմիրներին տալիս էր մեծ քանակությամբ ձիեր, հագուստ, սնունդ և այլն, իսկ լավագույն փնվորներին՝ մնացածներից առանձնացնող նժույգներ: Բանակում փնվորականությունն ուներ իր անխախտ օրենքները: Էմիրներն էլ չէին համարձակվում ծառայության ժամանակ խնջույքներ կազմակերպել: գիտեին, որ սուլթանը խստագույնս կպատժի: Բոլոր փնվորների գլխին կար բամբակից պատրաստված կարմիր փոքր գլխարկ, վրան՝ փոքրիկ չալմա: Գոտկատեղի աջ կողմից կապված էր թաշկինակ:

Հայերը, դաշնակցելով մոնղոլների հետ, շատ բնական էր, որ ներքաշվեցին մամլուքների դեմ պատերազմների մեջ: Սկզբնական շրջանում մոնղոլների հաջողությունները Հեթում Ա թագավորին հնարավորություն տվեցի՝ ընդարձակելու Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները, հայերին անցան Մարաշը, Բեհեսնին, Այնթապը, այլ բնակավայրեր ու ամրոցներ<sup>5</sup>: Սակայն շուտով հայերն զգացին հայ-մոնղոլական դաշինքի նաև բացասական հետևանքները. մամլուքները հարձակման թիրախ դարձրին Կիլիկյան Հայաստանը: Սուլթան Բեյբարսը 1264 թ., մեծ փոքր հավաքելով, ներխուժեց Կիլիկյան Հայաստան<sup>6</sup>: Հեթում թագավորը, հայոց սպարապետ Սմբատ Գունդստաբլի հետ հավաքելով ռազմական ուժերը, հասավ Անտիոքի դռների մոտ՝ սպասելով թշնամուն: Սուլթանն իր փոքրով հասավ Անտիոքի սահմանը և բանակ դրեց Սև գետի եզրերին: Սակայն երբ սուլթանի հետախույզները նրան պատմեցին հայերի ռազմական ուժի մասին, մամլուքները վախեցան և նահանջեցին իրենց երկիր: Մամլուքյան բանակը, թեև այն ժամանակ աշխարհի ամենահզոր բանակներից մեկն էր, գնահատեց հայկական բանակի ուժը և չհամարձակվեց դիմելու ռազմական գործողությունների: Կիլիկյան Հայաստանի նախորդ դարերի

պատմությունը ցույց էր տվել, որ ցանկացած ժամանակաշրջանում, երբ ժողովուրդը և փոքր համախմբվում են իրենց սպարապետի շուրջ, նա կարողանում է ջախջախել իր տարածքը ոտք դրած թըշնամուն:

Սակայն հայ-եգիպտական բախումը սրանով չարվարտվեց. մամլուքները պատրաստվում էին նորից արշավելու դեպի Կիլիկիա: Խաղաղության դիմաց սուլթանը պահանջում էր, որ երկու երկրների սահմանագլխին գտնվող բոլոր ամրոցներն ու տարածքները հետ վերադարձվեն, ինչպես նաև Շեհ կոչված ավերված շրջանը վերանորոգվի, դառնա առևտրական կենտրոն ու ծառայի երկու երկրներին<sup>7</sup>: Հայոց արքան մերժեց սուլթանի պահանջները: Կիլիկիայի վրա հարձակվող մամլուքյան փոքրերի հրամանատար դարձավ Համայի իշխան ալ-Մալիք-ալ-Մանսուրը, որը բանակը շարժեց դեպի Կիլիկիա: Այս արշավանքին մասնակցեցին նաև Իգ-ադ-դին Իլան (Կեղծանունը՝ Մահալու թույն) Քալաունը, որին հայ պատմիչները ներկայացնում են Ալֆի անունով<sup>8</sup>: Թշնամին կտրեց անցավ Ամասոսի լեռները և գաղտագողի հասավ Սև լեռան ստորոտը, որը կոչվում էր Նիկայապոլիս, և, գրավելով Մառի ճանապարհը, այնտեղ բանակ դրեց<sup>9</sup>: 1266 թ. օգոստոսի 24-ին սկսվեց Մառի ճակատամարտը, որը տեղեկ մեկ օր և ավարտվեց հայերի պարտությամբ<sup>10</sup>: Չոհվեց արքայորդի Թորոսը, իսկ Լևոնը գերի ընկավ: Մամ-

<sup>7</sup> Տես *Գրիգոր Ալենքյի, Պատմութիւն թաթարաց: Երուսաղէմ, 1974, էջ 52-53*, «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի»: Վենետիկ, 1862, էջ 163:


<sup>8</sup> Տես *Ղ. Ալիշան, Սիսուան: Վենետիկ, 1885, էջ 401*:

<sup>9</sup> Տես *Կ. Մուրաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում: Ե., 2001, էջ 434. Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ: Էջմիածին, 2001, § 1142, էջ 1943*:

<sup>10</sup> Տես *Յովհաննես Դարդել, Ժամանակագրութիւն Հայոց: Մ. Պետերբուրգ, 1891, էջ 18. Միխայիլ Ալիքովանկի, Պատմութիւն Հայոց: Մ., 1860, էջ 68, S. W. Muir. The Mamelukes or slave dynasty of Egypt, 1250-1517. London, 1896, P. 23* (սխալ է Մ. Օրմանյանի այն կարծիքը, թե իբր Մառի ճակատամարտը տեղի է ունեցել սեպտեմբեր ամսին: Տես *Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 1943*):

<sup>5</sup> Տես *T. Boase. The Cilician kingdom of Armenia. London, 1978, P. 26*.

<sup>6</sup> Տես *Սմբատ Սպարապետ, Տարեգիրք: Վենետիկ, 1956, էջ 244*:



Կիլիկիայի Հայկական թագավորության վերջին դարը (1265 – 1375)  
(Վ. Մուրաֆյան, «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում»: Ե., 2001)

լուքները ներխուժեցին երկիր, կողոպտեցին Միս մայրաքաղաքը, գերեվարեցին շուրջ 36 հազար հոգու<sup>11</sup>: Ի վերջո մեծ դժվարությամբ կնքվեց հաշտության պայմանագիր Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի միջև 1268 թ. հունիսի 24-ին Անտիոքում<sup>12</sup>: Այս պայմանագրով ապահովվեց արքայազն Լևոնի վերադարձը Կիլիկիա, իսկ մամլուքների անցան Դարպասկը, Դաբանը, Բեհեսնին<sup>13</sup>: Արուլ Ֆիդան այս տարածքներին ավելացնում է նաև Մարպարան, Շիհել Հադիդը և նշում, որ հայերը այնուամեն-

նայնիվ Բեհեսնին չտվեցին<sup>14</sup>: Փաստորեն այս պայմանագրով հայերը կտրվում էին մոնղոլների և ֆրանկների հետ շփումից: Ի վերջո, Կիլիկիայում համեմատաբար խաղաղ վիճակ հաստատվեց, իսկ արքայազն Լևոնը, վերադառնալով Կիլիկիա, բազմեց գահին (1270 – 1289, Լևոն Երրորդ)՝ փոխարինելով հորը՝ Հեթումին:

13-րդ դարի 70-ական թվականներին առաջին կեսին մամլուքների հետ ամենաշն հավանականությամբ պահպանվել են հաշտ հարաբերություններ: Այս առումով բնորոշ է այն փաստը, որ սուլթան Բեյբարսը նախ շնորհավորել է Լևոնին գահ բարձրանալու կապակցությամբ, ապա իր ցավակցությունը հայտնել Հեթումի մահվան առիթով<sup>15</sup>: Պետք է նշել նաև,

<sup>14</sup> Տես Վրաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», թարգմանեց Հ. Նալբանդյանը: Ե., 1965, էջ 237:

<sup>15</sup> Տես M. Canard. Le Royaume D'Arménie Cilicie et les Mamelouks juskuau traité de 1285, «Revue des Etudes Arméniens», T. IV. Paris, 1967, P. 441.

որ Եգիպտոսում Լևոնի գերության ժամանակ սուլթան Բեյբարսը նրա նկատմամբ շատ բարյալակամ վերաբերմունք է ցուցաբերել, նույնիսկ նրան թույլ է տվել ուղևորություն կատարել Երուսաղեմ: Ինչո՞վ կարող է բացատրվել սուլթան Բեյբարսի նման վերաբերմունքը ապագա հայոց արքայի նկատմամբ: Կարելի է ենթադրել, որ Բեյբարսը ցանկանում էր իր կողմը գրավել նրան: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Լևոն Երրորդը բնավ մտադիր չէր բարեկամանալ մամլուքների հետ: Եվ դրա վաղ ապացույցն է այն փաստը, որ 1271 թ. նա վերահաստատեց առևտրական պայմանագիրը Կիլիկյան Հայաստանի ու Վենետիկի միջև<sup>16</sup>: Հավանաբար սա առաջ բերեց մամլուքների պայքարը: Այդ մասին է վկայում նաև Մարկո Պոլոն, ըստ որի սուլթան Բեյբարսը 1271 թ. սպառնաց մտնել Կիլիկիա, բայց Լևոնի ուղարկած դեսպանները համոզեցին նրան հետ վերադառնալ<sup>17</sup>:

Հաջորդ փաստն այն է, որ Լևոն Երրորդն իր կառավարման առաջին տարիներին պզալի չափով վերականգնեց ավերված պաշտպանական կառույցները<sup>18</sup>: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ըստ 1268 թ. կնքված հաշտության պայմանագրի հայերը իրավունք չունեին մի շարք տարածքներում կատարելու վերականգնողական աշխատանքներ: Այս աշխատանքները ձեռնարկելուց առաջ Լևոն Երրորդը լավ էր հասկանում, որ դա կհարուցի մամլուքների հակազդեցությունը: Գիտական գրականության մեջ հայ-եգիպտական հարաբերությունների բարդացումը բացատրվում է նաև նրանով, որ Կիլիկյան Հայաստանը դաշնակցում էր մոնղոլների հետ, նրանց հետ մասնակցում էր մամլուքների դեմ պատերազմների, օգնություն էր խնդրում Եվրոպայից, բավականին սերտ և խնամիական հարաբերությունների մեջ էր խաչակիրների և

<sup>16</sup> Տես L. Balletto. Le commerce Armeno-Italien (XIIIe – XVe) siècle, Roma-Armenia. Roma, 1999, P. 187, Վ. Լանգրուս, նշ աշխ., էջ 110:

<sup>17</sup> Տես Մարկո Պոլո. Книга Марко Поло. М., 1955, с. 278.

<sup>18</sup> Տես D'Ohsson. Histoire des Mongols, Vol. III. Amsterdam, 1852, P. 473.

Արևմուտքի հետ<sup>19</sup>: Կիլիկիայի նման քաղաքականությունը ձեռնադրել էր Եգիպտոսին, և հայերի այդ քայլերի պատճառով հարաբերություններն անընդհատ լարված էին մնում: Բայցի նշված պատճառներից, կար մի կարևորագույն հանգամանք ևս: Դա Ալյաս (Լաժապո) նավահանգրատի մրցակցությունն էր Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի հետ, ընդամին, ինչպես նշում են հետազոտողները, Ալյասը հաղթականորեն էր մրցակցում Ալեքսանդրիայի հետ<sup>20</sup>:

Ի վերջո Լևոն Երրորդի գահակալությունից մի քանի տարի անց կատարվեց մի քայլ, որի հետևանքը եղավ մամլուքների հետ հարաբերությունների կտրուկ վատթարացումը: Լևոնն օգնության խնդրանքով դիմեց 1274 թ. Լիոնում հրավիրված եկեղեցական ժողովին նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու համար, բայց այդ և հետագա դիմումներն անցան ապարդյուն<sup>21</sup>: Մամլուքները դա գնահատեցին որպես 1268 թ. կնքված հաշտության պայմանագրի խախտում և նա-

<sup>19</sup> Տես U. Դավիթ-Քել, Լուսինեանք: Վիեննա, 1900, էջ 13, Rüdiger-Collenberg. The Rupenides, Hethumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician Dynasties. Paris, 1963, PP. 13, 15, U. Քաչատրյան, Արուլ Ֆարաջ Գրիգորիս իբն Ալ-Իբրիի պատմագրական երկերը որպես Կիլիկյան Հայաստանի XIII դարի պատմության սկզբնաղբյուր: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVII: Ե., 1998, էջ 156 – 157, G. Dedeyan. Histoire des Arméniens. Toulouse, 1986, PP. 310 – 312.

<sup>20</sup> Տես C. Otten-Froux. Le commerce Cilicien du XIIe au XIVe siècle, Arménie entre Orient et Occident. Paris, 1996, PP. 135 – 136; W. Heyd. Histoire Du Commerce Levant, T. I. Leipzig, 1885, P. 367; A. Мартиросян. Армянские поселения на территории Ирана в XI – XV вв. Е., 1990, сс. 173 – 174, U. Ճահիրճյան, Ալյաս քաղաք-նավահանգիստը Կիլիկիայում: «Պատմաբանասիրական հանդես», 1973, հմ. 1, էջ 97, U. Բուրդյան, Կիլիկիան Հայաստանի Պատմությունը Միջերկրական ծովի պետությունների արխիվներում: «Հայաստանի Պատմության նիւթեր Կենտրոնական Եւրոպայի դիւաններում»: Ե., 2001, էջ 15:

<sup>21</sup> Տես J. Richard. La Papauté et les Missions D'Orient, Au Moyen Age (XIIIe – XVe siècles). Roma, 1998, PP. 111 – 113; A. S. Atiya. The Crusade in the later Middle Ages. London, 1938, P. 37; J. Boyle, The Mongol World Empire 1206 – 1370, part XIII. London, 1977, P. 556.

խապատրաստվեցին հարձակման: Պատերազմ սկսելու պատրվակներից էր նաև այն, որ հայերը, իբր թե հագնելով մոնղոլների հագուստներ, կողոպտում էին մամլուքների առևտրական կարավանները<sup>22</sup>: Հաջորդ վարկածն ավելի անհավանական է և վերաբերում է Մամուն սուլթանի գերեզմանը երկրպագելու նպատակով Տարսուն ուղևորված 30 դերվիշների ուխտագնացությանը: Լևոնը, հավատարով այն լուրերին, թե իբր ծպտված Բեյբարսը նրանց հետ է, բանտարկել էր բոլորին, ինչն էլ դարձել էր մամլուքների ներխուժման պատրվակ<sup>23</sup>:

1275 թ. մարտի 25-ին՝ երկուշաբթի օրը, եգիպտական 100 հազարանոց բանակը, անձամբ սուլթան Բեյբարսի գլխավորությամբ, մտավ Կիլիկիա<sup>24</sup>: Այս տեղեկությունը կարևորվում է նրանով, որ հայկական և օտար աղբյուրներում եղած հիշատակություններից միակն է, որով ճշգրտորեն նշվում է, թե երբ է Եգիպտոսի մամլուքյան բանակը ներխուժել Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները: Հաղորդման ճշմարտացիությունը հաստատվում է մեկ այլ փաստով, որի մասին գրում է Մակրիպին: Նա հայտնում է, որ 1275 թ. փետրվարի 1-ին մամլուքյան զորքը դուրս եկավ Կահիրեից և շարժվեց դեպի Սիրիա, մարտի սկզբին հասավ Դամասկոս, ապա կարճատև դադարից հետո ճանապարհ ընկավ դեպի Կիլիկիա<sup>25</sup>: Ուստի կարելի է վստահորեն նշել, որ 1275 թ. մարտի 25-ի մասին տեղեկությունը համապատասխանում է իրականությանը:

Մամլուքյան բանակի ներխուժումը Կիլիկիա, առանց ժամանակի ճշգրտա նըշման, արձանագրել են նաև Սամվել Անեցին, Բար Հեբրաուսը, Սմբատ Սպարապետը և ուրիշներ: Աղբյուրները հաղորդում են, որ մամլուքյան բանակը Կիլիկիա է մտնել Դարպասակի կապանով և գրավել Մամեստիան<sup>26</sup>, Սիսը: Մամլուքները այնուհետև

ուն մտան Տարսուն, կողոպտեցին պետական գանձերը: Միայն Միսի միջնաբերդն է հաղթական կերպով դիմադրել մամլուքների հարձակումներին<sup>27</sup>:

1276 թ. մամլուքները կրկին արշավեցին Կիլիկիա այս անգամ հյուսիսարևելյան՝ Մարաշի կողմից<sup>28</sup>: Մամլուքյան զորքերի ներխուժումը Կիլիկիա արձանագրել են միջնադարյան հեղինակներ Բար Հեբրաուսը, Սմբատ Սպարապետը, Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկը և ուրիշներ: Սա այն վճռական պահն էր, երբ պետք է որոշվեր պետության լինել-չլինելու հարցը: Եվ փառք ու պատիվ մեր ժողովրդին, հատկապես քաջ պորավար Սմբատ Սպարապետին, որը կարողացավ Լևոն Երրորդ թագավորի հետ պատշաճ կերպով կապակերպել երկրի պաշտպանությունը: Հնուտ մարտավարության շնորհիվ հայկական զորքը կարողացավ գլխովին ջախջախել թշնամուն՝ ապահովելով հայկական պետության անկախությունը:

Այն ժամանակվա ամենանշանավոր հեղինակներից մեկը՝ Բար Հեբրաուսը, հետևյալ կերպ է նկարագրում եգիպտական զորքերի, ինչպես նաև թուրքական ցեղերի ներխուժումը Կիլիկիա. «Նրանք հայտնվեցին Մարաշի կողմից՝ նպատակ ունենալով թափանցելու Կիլիկիայի լեռնային շրջանները: Երբ Լևոն Երրորդ արքան իմացավ, նա ժողովեց հայոց զորքը, նրա առաջնորդ կարգեց իր հորեղբայր Սմբատ Սպարապետին: Նրանք գնացին Մարաշի մոտակայքը թշնամուն ճակատամարտ տալու: Այդ կռվում պոհվեց Սմբատ Սպարապետը և այլ ավսվականներ, իսկ թշնամին հազարավոր սպանվածներ տվեց, չկարողացավ մտնել Կիլիկիա ու հետ գնաց»<sup>29</sup>: Սմբատ Սպարապետի Տա-

նակ Հավարմունքի գրոյ պատմագրայ: Վաղարշապատ, 1893, էջ 152:

<sup>27</sup> Տես Ղ. Ալիշան, Հայապատում: Վենետիկ, 1901, էջ 481, S. Runciman. A history of the Crusades, Vol. III. London, 1978, P. 347.

<sup>28</sup> Տես Գ. Միքայելյան. История Киликийского армянского государства. Е., 1952, с. 408, Մ. Զամյանյ, Հայոց Պատմություն, հ. Գ.: Ե., 1984, էջ 277:

<sup>29</sup> Տես Բար Հեբրաուս, նշ. աշխ., էջ 454:

րեզրքի շարունակողը հետևյալ կերպ է նկարագրում այս դեպքերը. «Երբ թշնամու բանակը մոտենում էր հայկական թագավորության սահմաններին, հայերի մի մասի մոտ խուճապ սկսվեց: Եվ ահա այս վճռորոշ պահին հնչեց Սմբատ Սպարապետի ձայնը, որը անձամբ առաջնորդեց զորքերը դեպի մարտի դաշտ: Սարվանդիքարի մոտ հայոց բանակը վճռական ճակատամարտ տվեց: Մարտից առաջ սպարապետը հայկական զորքը բաժանեց երկու մասի: Վերջինից զորքերի փոքր մասը՝ սպարապետը, անձամբ զորքերի գլուխ անցած, առաջին հարվածն ուղղեց թշնամուն: Տեսնելով հայկական զորքերի նվազ բանակը՝ մամլուքյան զորքերը որոշեցին շրջապատել և ոչնչացնել նրանց: Երբ մամլուքյան բանակը շրջապատել էր հայկական փոքրաթիվ զնդերին, դարան մտած հայկական զորքերը, Լևոն թագավորի գլխավորությամբ, դուրս եկան և հանկարծակի հարձակվեցին թշնամու բանակի վրա: Մամլուքյան բանակից շատերը կոտորվեցին: Ի վերջո սուլթանի բանակը պարտվեց և հետ նահանջեց»<sup>30</sup>: Այս տեղեկությունը հաստատում է նաև Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը<sup>31</sup>:

Այս հաղթանակը ևս մեկ անգամ ապացույցեց, որ հայ ժողովուրդը միշտ էլ

ունեցել է քաջարի գավակներ, որոնք անհրաժեշտ պահին պատրաստ են եղել ոտքի ելնելու և հայրենիքը պաշտպանելու օտար նվաճողներից:

Նշելով հայկական բանակի փայլուն հաղթանակը՝ չպետք է մոռանալ, որ այդ ճակատամարտը հայկական կողմից նույնպես խլեց պոհեր: Քաջարի պորավար Սմբատ Սպարապետը, ցանկանալով գերի վերցնել սուլթան Բեյբարսին, հետապնդեց նրան, սակայն Սարվանդիքարի<sup>32</sup> անտառում վիրավորվեց և մահացավ: Այս ճակատամարտում պոհվեցին ևս 13 հայ իշխաններ<sup>33</sup>: Իսկ թշնամու կողմից պոհերը մի քանի անգամ ավելի էին: Եգիպտոսի սուլթանության 1276 թ. արշավանքը Կիլիկիա փաստորեն անփառունակ ավարտ ունեցավ:

Ի վերջո պետք է նշել, որ թեև մամլուքներին հաջողվեց 1266 թ. և 1275 թ. մտնել Կիլիկիա, սակայն 1276 թ. Մարաշում հայկական զորքը տարավ այնպիսի հաղթանակ, որը երկար ժամանակով խորտակեց Կիլիկիային տիրելու և այն կողոպտելու մամլուքյան սուլթանության հույսերը:

<sup>32</sup> Սարվանդիքարը գտնվում է Մարաշից հարավ, Ջահան գետի վերին հոսանքի ձախ կողմում (տես «Մանր ժամանակագրություններ», Ե., 1951, հ. 1, էջ 105):

<sup>33</sup> Տես Բար Հեբրաուս, նշ. աշխ., էջ 454, Սմբատ Սպարապետ, նշ. աշխ., էջ ք:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО КОНФЛИКТА МЕЖДУ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИЕЙ И ЕГИПЕТСКИМ МАМЕЛЮКСКИМ СУЛТАНАТОМ (60 – 70 ГГ. XIII В.)

А. Э. ОГАНЕСЯН

РЕЗЮМЕ

На основе исследований многочисленных источников, посвященных истории возникновения и ходу конфликта между Киликийской Арменией и Египетским Мамелюкским Султанатом, даны оригинальные авторские уточнения отдельных эпизодов, дат и событий этой героической страницы в истории армянского народа.

**MILITARY HISTORY**

THE PAGE OF THE HISTORY OF THE MILITARY-POLITICAL CONFLICT  
OF THE CILICIAN KINGDOM OF ARMENIA AND THE EGYPTIAN  
MAMELUKE'S SULTANATE (THE 60–70s OF THE XIII CENTURY)

A. E. HOVIANNESIAN

SUMMARY

There have been given the original author's more accurate definitions of separate episodes, dates and events of the heroic page in the history of the Armenian people, basing upon the researches of numerous sources, dedicated to the history of the rise and course of the conflict between the Cilician Kingdom of Armenia and the Egyptian Mameluke's Sultanate.